## ԹԷ ԱՅԴՊԷՍ, ԼԱՒ Է ՆՐԲԷՔ

—

Ախալքալաքում, մի քանի անձանց մէջ, յղացել է մի գեղեցիկ միտք, կազմակերպելու հասարակութեան համար հանրամատչելի, շաբաթական դասախօսութիւններ, որոնցով կարելի լինէր տալ ժողովրդին բազմակողմանի տեղեկութիւն, հասկացողութիւն շրջապատի և կեանքի վերաբերմամբ։

Սքանչելի և գեղեցիկ միտք։

Հետաքրքրական է սակայն, թէ մինչև այժմ տեղի ունեցած դասախօսութիւնները ի՛նչ հետևանք, ի՛նչ արդիւնք են ունեցել. հասարակութիւնը ինչպէս է վերաբերվել և ի՛նչ չափով յաճախել։

Ցաւօք սրտի պէտք է յայտնել, որ հասարակութիւնը առաջին անգամից և եթ յետ է մղվել. սակայն ինչո՞ւ համար, արդեօք նրա համար, որ նա չը սիրեց, ատեց դասախօսութիւնները, թէ մի ուրիշ պատճառ կայ։

Առաջին դասախօսութիւններին դժբաղդաբար առիթ չեմ ունեցել ներկայ գտնվելու, բայց երրորդին և չորրորդին շտապեցի ներկայ լինել։

Երրորդ դասախօսութեան նիւթը «վաճառականութեան, նրա կատարած դերի և զարգացման» մասին էր. և ահա դասախօսը, երիտասարդ մի ուսանող, Պառնասի գագաթից սկսում է կարկուտ, որոտ ու շանթ թափել ժողովրդի գլխին։ Վերջինս աչքերը չռած, ականջները լայն բաց արած լսում է, լսում, բայց ոչինչ չէ հասկանում. նրան թւում է, թէ դասախօսը մեծ նիւթի մասին է խօսում, նոր բան է հաղորդում, բայց տարաբաղդաբար իրար չեն հասկանում... Դասախօսը ցաւակցութիւն է յայտնում, որ բացակայում է վաճառականական դասը, որ այդ դասին պատկանողները չեն հետաքրքրվում իրանց պատմութեամբ, և բարկացած գոչում է՝ «ինչո՞ւ են սուտ խօսում, խաբում»։ Բաղդի բերումով այդտեղ ներկայ գտնվող երկու վաճառականներն իրանց անյարմար դրութեան մէջ են զգում և իսկոյն հեռանում են։ Մնում են աշխատաւոր դասակարգը և «չլեապները»։

Դասախօսը, անշուշտ հակառակ իր ցանկութեան, վերջացնում է իր թեման՝ առանց ոչինչ հասկացնելու իր ունկնդիրներին, ...որոնք իրար երես նայելով և խէթ-խէթ հայեացք գցելով դասախօսի վրա՝ հեռանում էին դահլիճից։

Չորրորդ դասախօսութեան նիւթն էր հայկական տառերի գիւտը, ինչպէս և այդ առիթով առաջիկայում կատարվելիք յոբելեանական հանդէսները։

Խօսում էր Բաղալեան ազգանունով լաւ բանաւարտ մի պարոն։

Նիւթը հասկանալի, պարզ և միևնոյն ժամանակ շահեկան էր, բայց գրաւել էր շատերից քչերին։

Դասախօսը՝ երկու ձեռքով պինդ բռնած ամբիոնից՝ սկսում է. «Այն գիրը, այն տառերը, որոնցով մինչև այժմս օգտվում ենք, գտել է մեզանից շատ առաջ... ս. Մեսրովբը»։ Անցնում է նրա կենսագրութեան։ Կցկտուր և կարկատած տեղեկութիւն տալով նրա մասին, մի ակնարկ գցելով տառերի գիւտի վրա, այն էլ անցողակի, կանգ չառնելով պատկերագրութեան վրա, որ այնքան տարածված էր ամեն տեղ, ինչպէս և մեր մէջ, անցնում է տպագրութեան, թւում է մի քանի թւեր, գըրքերի ու հոգևորականների անուններ և վերջակէտ դնում։

Ժողովուրդը՝ նստած՝ դեռ սպասում է, թէ ի՛նչպէս, ո՞վ գտաւ տառերը, ինչ 1500-ամեակ է, որ կատարելու են։ Լսում է միայն պարզ այն, որ փող են տալու, միայն փող, և տհաճութեամբ թողնում է դահլիճը։

Ահա և վերջին դասախօսութեան պատկերը։ Պէտք է շեշտել և այն, որ որքան էլ այս դասախօսութեան թեման ժամանակակից էր, բայց ցաւելով պիտի ասենք, որ դասախօսը չը կարողացաւ նրա նիւթը իր հասարակ ունկնդիրներին մատչելի դարձնել, որովհետև պարոնը ըստ երևոյթին մոռանում էր, որ հասարակ ժողովրդի շրջանում խօսված դասախօսութիւնները հասկանալի դարձնելու առաջին պայմանը մատչելի լեզու, պարզ, հասկանալի լեզու գործածելն է։

Հինգերորդ դասախօսութիւնը, որի նիւթն էր «կաթողիկոսութեան կատարած դերը», իսկ դասախօսը՝ Գէորգեան ճեմարանի լաւ բանաւարտ Բաղալեանը, դժբաղդաբար դարձեալ անցել է անաջող։

Արդ՝ այս փաստերը մեզ բերում են այն եզրակացութեան, որ ցանկալի էր նիւթերի ընտրութեան գործում կոմիսիայի մասնակցութիւնը, որպէսզի կարելի լինէր ընտրել ժողովրդի պատրաստականութեան համեմատ նիւթ, որով հասած կը լինէին բուն նպատակին, այլապէս եթէ այդպիսի թերի դասախօսութիւնները շարունակվեն, շուտով կը մեռնի այն ցանկութիւնը, որ կայ հասարակութեան մէջ։

Աշիկ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երէկ, օգոստոսի 17-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամը 7-ին, Գօրու կայարանում տեղի է ունեցել Բօրժոմից եկող գնացքի խորտակումը։ Ինչպէս հաղորդեցին մեզ, գնացքի խորտակումը առաջացել է հետևեալ հանգամանքներում։ Գնացքը Գօրի կայարանին մօտենալիս՝ երկաթուղային ալա-